



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

85.342-

~~115~~

13116

891.99

5-24

1903.

2003
B

891.542-3
4-24

1346

48

L. - M. u. v.

519

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՀ

Հ ր ա տ. Լ. Բ.

ԹԻՎԻԼԶ

Տիպ. Դ-va «Վերեչևъ и Камен-
макеръ» Միխ. պատճեն Տպ. թիվ. 474 կամացիւր և կամացիւր»

1903

9498

891 99
5-24 1346

ՀՀ

ՕՏԱՐՈՒԹԵԼԻՆ ՄԵԶ

I.

Ուրախութեանս շափ չը կտր, երբ վիրջապէս մի
կերպով կարողացայ հօրս թոյլաւութիւնը ստանալ՝ զնա-
լու մի որեւ է տեղ, մի որևէ քաղաք աշխատանքի: Անը
չէ որ ինձ համար մեծ ամօթ էր անգործ տանը նստել
և զայելի ծերունի հօր աշխատածը, այն էլ այն ժամա-
նակ, երբ նա ծերացել-համարեա ոչինչ չէր կարողանում
աշխատել: Գա նոյնիսկ խզնիս դէմ էր: Դէմ էր բոլոր մեզ
շրջադառող զրացիներին, որոնց արդար բողոքը համում
էր ինձ աւելի շափաղանցացրած, լի յաւելուածներավ
«Մեծացել քսան տարեկան տղայ է դարձել, սակայն չէ
ամուշում հօր տանը նստելուց. կարծես հասած աղջիկ է,
փեսացուին է սպասում...» Այս ու սոյնանման շատ բր-
դորներ էին զուրս թռչում զրացիներիս բերանից, որոնց
ամեն մի խօսք սուր սլաքի պէս ծակում էր սիբաս, բայց
որոնց արգելել ես անկարող էի: Ամեն մի մարդ իւր
կարծիքի ազատ տէրն է, հետևագէս ինչ կտրող էի ա-
նել, եթէ ոչ-լուել: Նրանք իրաւունք ունէին բողոքելու,
քանի որ ես սլաքապ էի: Իմ հասակի աղերքը արդէն
մեր գիւղում լաւ աշխատող ճեռք էին իրանց տան հա-
մար: Իմ հասակակիցներից շատերը նաւթի մայլաքաղա-
քում արհեստաւորներ էին միւսները տանը տնային գոր

ծերն էին առաջ առնում: Խոկ ես ուզիղ, որ հասած աղջըկոյ պէս տանը նստել, ոչ մի գործի ձեռք չէի մխում, պատճառ, որ բիշ-շատ տրուրէնի կտոր էի սովորել մեր մի գաւառական փոքրիկ քաղաքում: Եւ կաքծես ինքս ինձ լայիդ չէի անում այդ «գեղագայի» պաշտօնը ստանձել, այսինքն անային գործերին ձեռք մխել: Խոլ լինել արհեստաւոր... ոչ, դա բնչպէս կարելի է. աղըել, այն էլ կեզար մէջ, մտածելն անգամ գժուարանում էի:

Սակայն որքան զրացիներիս բողոքը իրաւացի էր, հայրս այնուամենայնիւ մնում էր լուռ և ոչինչ չէր առում այդ խօսքերի դէմ:

Նա կեանքի ասպարիզում մեծ դեր էր խաղացել. բայց այսօր նա չէր վայելում իւր այդքան աշխատանքի պահութը, չը նայած, որ ոչ ասրեցակ էր և ոչ էլ չուայլ պահոնդ: Նա ամեն բանում չափաւոր էր, բայց ներկայում առքառ էր: Խոկ այս բոլորի պատճառն այն էր, որ նո միակ մարդն էր մեր զիւզում, որ ուսման նշանակութիւնը հասկանում էր: Նա հասկանում էր, թէ ինչ բան է ներկայումն ուսումը, թէ որպիսի անհրաժեշտութիւն է նա: Եւ այդ մարդը իւր ամբողջ հարստութիւնը, որ մեր զիւզում առաջիններից էր—ծախսեց մինչև վերջին կապէկը փօքր եղբօրը և երկու սրդոցը բարձրագոյն ուսում տալու համար: Բայց նրա այդ տաժանելի աշխատանքը ի զուր անցաւ, բալորսին ի զուր...

Եղբայրը բարձրագոյն ուսումը ստանալուց յիտոյ, գեռ ուսումնաբարանի դգեստները շըհանած-մեռաւ, անյօյս թողնելով խեղճ հօրս:

Սակայն դա չեղաւ հօրս համար մի «իրատ», ինչպէս մեր տգէտ հարեաններն էին բացատրում: Նա մնաց մինչև վերջը հաստատ իւր գաւանսնիքին:

Եղբօր մահից յիտոյ, հայրս բոլորովին շընկնուեց: Նա ուսումի տունց և երկու սրդոցը. բայց զժրազզաբար

երկուսն էլ հիւանդ էին: Հիւանդ էին անբուժելի հիւանդամբ: Մրանց հիւանդութիւնն էր, ող հօրս վերջնականապէս յուսահատեցրեց: Չը նայած նրա քիչ տարիքին, նա նման էր բոլորովին ծեր մարդու. նրա մազերը սպիտակել էին ծիսնի պէս, դիմքի վրայ խորշամներ էր առաջացել: Նա ծեր էր, գեռ չը վայելած որդոց աշխատանքի քաղզը գտուկները, որոնց նա այնքան անհամբօրութեամբ սպասում էր, որ օրեր էր հաշում այդ ցանկովի օրին հասնելու:

Փափակելի երազները շիրապործուեցին. Նրանք փշուեցին ինչպէս հասարակ ապակիներ: Թրպի սի յասեր որպի սի իղձեր, բայց դանց տեղը ստացաւ որդոց հիւանդութեան թօթը: Եւ նա մի քանի ամսում արդէն ծեր էր...

Այդ պատճառով էր, որ հայրս զժուարանում էր ինձ իմ կամքին թողնել:

Սակայն վերջին ծայր յաւսահատութիւնը, զրա հետեւ խօստ կարիքը, ստիպեցին նրան թողնել ինձ իմ կամքին, թողնել, որ ես էլ պնայի «բախտա» փորձելու:

Պէտք է ասել, որ մի այլ պատճառ ես կար, որ հայրս չէր կամճում ինձ թողնել օտարութեան դիմելու:

Նա զիտէր, որ ներկայում հարիւրաւոր և հազարաւոր մերկ գործաւորներ թափառում են բաղարի խուլու մութ գուղցներում անգործ, սոված, ծարաւ, անտեղ, անօրեան, մերթ ընդ մերթ բաղխելով մի որեւ է հաբուսա զարծարանատէրի զուռը: Բայց անյօյս և ապարդիւն: Կրիզիս է, գործի կրիզիս: Ոչ մի տեղ գործ չը կայ: 2ը կայ գործ արհեստաւորի համար, չը կայ զործ «կարգացող», զիր իմացողի «հոմար»: Ես էլ բիշ-շատ վերջիններիս զասկարպին էի պատկանում:

Բայց չը զիտէի, թէ ինչ է կատարում այդ ժամանակ քաղաքում: Իմ իղձս էր, իմ միակ ցանկութիւնս էր,

լինել մեծ քաղաքում, ապրել այնտեղ, փող աշխատել,
օգնել խեղճ հօրս: Մտածում էի, ապրել այնտեղ, վայելել
այնտեղի բարիքները, և երբ մտածում էի, հոգով Փեղափոխ-
ում էի, երեակայում էի ինքս ինձ քաղաքում, յանկարծ
մի եկաքական ոյժից կարծես դրդուած-ցնցում էի,
լցում էր հոգիս անասելիք ուրախութեամբ:

Բայց աւազ, հետու էր ինձնից այն միտքը, թէ ինչ-
պէս կը լինի իմ գրութիւնը, եղր չը կարդանամ գործ
ճարել: Այն ժամանակ ինչպէս պիտի ապրէի, ինչ միջոց-
ներով...

Ես մոռացել էի այդ մասին մտածելու, ևս կուրա-
ցել էի իմ երեակայական ցնորդներից: Մասուիկ ուրա-
խութիւնը թոյլ չը տուեց ինձ այդ մասին մտածելու:

Որքան լաւ կը լինէր, եթէ մէկը այդ մասին ինձ
հարց տար, եթէ ստիպէր ինձ այդ մասին մտածելու-
զերջապէս եթէ ես այնքան խելք ունենայի ինքս մտածե-
լու և ծիծաղելու իմ լիմար ցնորդների վրայ:

Կը գնամ ես քաղաք, մի զործի կը մտնեմ, և... ո՞հ,
ուրախութիւն, որքան ուրախ կը լինի կեանքս քաղա-
քում: Մանաւանդ եթէ ես իմ գործի մէջ յառաջադիմու-
թիւն ցոյց տայի, որի համար ոռնիկս աւելցնէին, այն
ժամանակ ես բաւական կ'օգնէ հօրս: Բայց զրանից կը
վայելի սրաի հրանոք կեանքի վայելքները, այն է՝
կը գնայի թափքն, կը յաճախէի պրագարան, կը գնէի
շատ հետարքիր զրքեց և որքան ուրախ կը լինէր կեան-
քըս: Որպիսի ուրախութիւն...

Ահա թէ՝ որպիսի ցնորդներ էին սնցնում զիսովաւ

Մայրս ինձ համար պատրաստութիւն էր աեսնում:
Ես վազ պիտի ճանապարհուիմ գէպի Ք քաղաքը: Օ՛,
այդ փափակելի վազը վերջապէս երբ պիտի վագ, երբ
պիտի վերջապէս ճանապարհուիմ.., մտածում էի ես և
սիրա քիչ էր մնում ուրախութիւնից գուրս թռչեմ:

Վայելն ուսուած ու հանգան ու նորման ուսուած
նայ դար առնել ու ուսուած Ա. մասում մասնաւուած
ուսուած ուսուած ու ուսուած ու նորման ուսուած
ուսուած Վերջապէս եկաւ և այդ ցանկալի օրը:
Ես արդէն վագոնում նստած, սլանում էի զէպի
Ք քաղաքը: Սակայն որքան գանգաղ էր թւում ինձ վա-
գոնի արտղ վագըքը: Քիչ էր մնում անհամբերութիւնից
իջնէի վագոնից, և վազէ վազ գնայի. ահա թէ՝ որպիսի
ձգողական ոյժով ձգում էր ինձ Ք քաղաքը: Գնացըի
ամլող ժամանակ սիրոս արփարփում էր, թէ ահա ահա
քաղաքը կերեայ: Մերթ ընդ մերթ ես անհամբերութեամբ
զլուխո զուրս էի հանում վագոնի լուսամուտից, կազծես
իմանալու հետո է արդեօք քաղաքը: Հասայ վերջապէս
և քաղաքը, իջալ վագոնից, իրեկիններս աեղափոխեցի
կառք, և ասացի սր քշէ Ն.ի քարւանսարան:

Կառքը պացաւ:

Քաղաքի ահապին աղաղակը, ականջ լալացնող զբ-
զպբացը ինձ ապչացըին: Ամրազ քաղաքը զործի էր:
Անցնում էին մօափս բառնած սալեր, անցնում էին դա-
նական մարդիկ ձեռներին ինչ ո, ծախու, բախ, ինչ որ
գոռարով, զովարանելով իրանց ապրանքը, անցնում էին
մեթի կառքիր, մարդիկ, կանաք, երեխոյ, ծեր և բո-
լորը իսեստ շտապով:

Ինձ համար նոր և նոր հետառոքիր բաներ էին լոյս
ընկնում: Պայտատանման տները շիացում էին պատճ-
ռում իսձ: Գեղեցիկ խանութները իրանց տեսակ անսակ
և զոյնդգուն իրեկեններով, ելեքարական ասատ լուսաւորու-
թիւններով—զիթիշ տպաւորութիւն էին թողնում վաս: Այսքան էլ հարստութիւն, այսքան էլ ձոխութիւն... Երե-
ւակայիլն անդամ դժուարանում էի: Եարձր աները,
մեծ մեծ կամարական պատռէնաններով, զեղեցիկ քան-
գակնելով, լայն պատշգամբներով հիացնում էին ինձ:

Բայց յանկարծ իմ մարմնով մի սառսուռ անցաւ,
մի տարօրինակ, սոսկալի սառսուռ: Ես մէնակ զգացի ինձ
այդ ահազին քաղաքում, մէնակ, բառիս բուն նշանակու-
թեամբ: Հաղար ու մի մաքեր պաշարեցին ինձ: Սկսեցի
ճնշուել, կարծես տեղս նեղ էր, խիստ նեղ: Մի տեսակ
սոսկում տիրեց ինձ: Ես նոր միայն սկսեցի հասկանալ
քաղաքի ահաւորութիւնը, այն քաղաքի, որ հարիւրաւոր-
ների է կլանել անողութաբար: Ես նոր զգացի, որ այս
աղմաղմաց քաղաքում ինձ հոտմար դժուար էր լինելու ապ-
րել, եթէ գործ չը ճարէի: Օ՛, ինչ կը լինէր արդեօք
իմ վիճակը, եթէ իսկապէս ոչ մի գործ չը կարողանայի
գտնել...

Այս միտքը ինձ մինչ այն աստիճան սարսափեցրեց,
որ ես չիմացայ, թէ ինչպէս կառքը տեղ հասաւ:

Եւ կառապանի ձայնից սթափուելով, վեցըի իրե-
ղեներս, և քարաւանսարայի ժառայի առ աջնորդութեամբ
դիմեցի շինութեան վերին յարկը, որտեղ ինձ յատկացրին
մի բաւական մութ և կեղաստ սինեակ: Մի վօքրիկ լու-
սամուտ ուներ, այն էլ ապակիների մեծ մասը փշուած
ծակ ու փշացած թղթերով կալնած: Հենց առաջին աես-
քից սինեակը վրաս խիստ վատ տպաւորութիւն թողեց,
մի կողմից իւր անշրջութեամբ, անճոռնի գիրքով, միւս
կողմից էր, որ սաստիկ ցուրտ էր, սոյեմբեր ամբուը լինելով:

Քարերախտաբար մի պարսկասանցի ջանել գըտ-
ցի ունէի, որը սինեակը վարձել էր ամիսով, և տպում
էր իւր... դպրոցում ուսանող եղոր հետ, և որի ունեա-
կում կար էլի մի մարդու տեղ: Ես հենց միւսը օրը մի
գիտուածով ծանօթացայ դրա հետ, և խնդրեցի վարձով
ինձ տեղ տալ իւր մօտ:

Նա էլ բաւական շքաւոր էր, և քաշուել էր քաղա-
քի այս մութ և մարդկանցից հետու անկիւնը, էժանու-
թեան պատճառով:

Եղելի նա էլ ճաշակել էր այն բաժակից, որից ես
էի այժմ ճաշակում, այդ պատճառով նա ինձ ուրախու-
թեամբ ընդունեց իւր մօտ, ակսնելով իմ անել զրու-
թեանս, և նոյն իսկ անվտրձ:

Աւզիդ է առած, որ ժամանակի ժշուառութիւնը
մասզուս հագին ազնուացնում է: Նա ինձնից վարձ
չը պահանջեց, ասելով, որ ևս ևս անկործ նմ,
և երբ գործի կը մտնեմ, այն ժամանակից կը վեցնէ
վարձատրութիւն:

Ես ժամացի: Թուում էր ինձ, թէ բախար ինձնից
երես չէ վարձել: Հենց տուաշին քայլում ես յաջողու-
թեան պատահեցի: Ընվաճ պիտի աղըէի, և դա բաւ-
կան կը թեթեացնէր իմ ծախս: (Թէ պէտ այնքան էլ
փաղշունէի:)

Եւ ես ուրախ էի, որ հենց առաջին քայլումս պա-
տահնիցի աղնիւ մարգաւ, որը իմ կարծիքով պէտք է որ
յաջողութեան նշան լինէր:

III.

Հայրս մի նամակ էր տուել մեր մի ծանօթին յանձ-
նելու համար, որը մեր գիւղացի էր և նոյնիսկ իմ ման-
կութեանս ընկերն էր: Դրա անունն էր Խառհակ Գեորգ-
եան: Գերբիւանը ծառայում էր քաղաքացին մի հիմնարկու-
թեան մէջ, սպակ հաշուածալաւ:

Նամակի բովանդակութիւնը իմ մասին էր, որտեղ
ասուած էր, որ Գէօրգեանը հոգ առնէ իմ մասին:

Մի քանի օր թափառելուց յետու, ևս հազիւ հազ
կարողացայ գտնել նրա տունը:

Ներս մտայ նրա սինեակը և տեսայ, որ նա շր-
ջում է ինքնաբաւական կերպով, նա սկզբումը ինձ չը
ճանաչեց, բայց երբ ճանաչեց, մօտ վաղեց և մինք զըբ-

կախաւնուեցինք, ինչպէս նախկին սիրելի ընկերներ: Եթում էր, օտարութիւնը չէր ջնիւ նրա սրտից ընկերութեան զգացմունքները: Այդ բանը ինձ բաւոկան ուրախացրեց: Ինձ թւում էր, թէ նա ինձ ռառնասրտութեամբ կ'նդաւնէ. ինձ թւում էր, թէ օտարութիւնը վազուց ջնջած կը լինի նրա սրտից ընկերական զգացնումներո, բայց դրա հակառակը աեսայ:

Պէտք է այս էլ ասել, որ մեզ հայերիս-ընտ մեծի մասամբ զիւղացիներիս մէջ կայ մի շատ վատ սովորութիւն: Դա այն է, որ երբ մի գիւղացի տղա գնում է քաղաք, և շնորհիւ այն բանի, որ զիւղումը մի երկու այրուբնի կտոր կայ, ասամբ էլ բարեսպատեհ հանգամանքների-մտնում է մի որևէ տեղ ծառայութեան, և բախտի բնըմամբ, երբ նրա սոճիկը բիշ-շատ աւելի է լինում սովորականից, ել նրա հետ-ինչպէս աժում են «խօսուալ» լի կարեիր: Նա քաղաքում մեծացել, «գամպուիին» է դարձել. պէտք է հետք քիշ ակնածութեամբ վերաբերուել, եթէ ոչ կինթ սրկուեա նրա կծու նկատողութիւններին:

Եւ այդ բանը ես աշբի առաջ ունենալով, քիշ անվտանգութեամբ մայն նրա սինեակը: Սակայն նրա քաղցր վարմունքը բոլորը փարատեց:

Այսուհետեւ նա սկսեց հաղար ու մի հարցեր՝ ուղղել ինձ հալլենիքից: Հարցրեց իւր ծնողների մտսին, աղդականների և ծանօթների մտսին: Հարցրեց, թէ ով է կենդանի և ով մեռտծ, այս ինչի աղջըկանը ում տուեցին, վլանը, դեռ չէ պսակուել, և այլն:

Ես նրա ամեն մի հարցերին գոհացումն առուեցի: Հարցրեց և իմ գալուս պատճառը: Ես հօրո, զրած նամակը յանձնեցի նրան, առանց պատճառինելու:

Նո արագութեամբ պատու, ծրարը, և սկսեց կարգալ: Կարգալու միջոցին ես նկատեցի նրա դէմքի վըրայ գժգոհութեան նշաններ. Նրա դէմքը կամաց կումաց

մռայլունց, և նա նամակի ընթերցումը վերջացնելուց յետոյ, զարձաւ ինձ:

— Այդպէս ուրեմն. հայրդ իւր ունեցած-չունեցածից դրկուել է:

— Այս. պատասխանեցի ես ախրութեամբ: Հօրս խանութը մեր զիւղացի երկու վաշխառուներ սև ինականեցին իրանց, և մնոր նիւթականապէս բոլորվին քայրայլեցինք: Այդ բանը, պէտք է ասել, որ հօրս առողջութեան վրայ, իւր ծերութեան հասակում խիստ թանկ նստեց: Նա ներկայումս համարեա զրկուել է աշխատելու ընդունակութիւնից:

— Վատ է, չափազանց վատ. ասաց նա, գէմքը կընձաելով:

— Ի՞նչ արած...

— Ի՞ոկ գու հզել ես մի գործի մտնելու, արգագ չէ:

— Այս, ինչպէս անսիում ես. պէտք է հօրս տոսղութիւնը իւնը վերականգնել: Նրա բարբարած առողջութիւնը բժշկական գեղօնայրը անզօր են բուժելու: Նա իրան այն ժամանակ առողջ կը զգայ, երբ սոսկալի հարուածին վիստարինի բրդոց աշխատանքը, երբ վայելէ նըլանց դառն քրատինքի քաղցր պատուները: Նո այն ժամանակ գժոխային շարշարանքներով չի աշխատի մի քանի մե դուշների համար, ինչպէս հիմայ է անում: Նա խիստ երջանիկ կը լինի, որ իւր որդիքը փշացած չեն: Եւ այլ ուրախութիւնը կը լինի մի առողջարար սպեղանի հօրս անբուժելի հիւանդութեանը:

— Ջատ իրաւ ես ասում, բայց եթէ զարծ չը ճարուի այն ժամանակ...

— Այս ժամանակ ես այստեղ վերջ կը տամ կեանքին և յետ չեմ դառնայ զիւղը. զուրս թռու իմ բերանից:

— Նա կարեկցարար նայեց ինձ:

— Բայց և այնպէս, ասաց նա.—պէտք է խօսուովանել, որ շատ դժուար է գործ ճարել. մանաւանդ մի այսպիսի ժամանակի; եղբ քաղաքու մի է անգործ և սովածթափառող երիտասարդներով:

Այդ խօսքերը քաւական էին իմ զեղեցիկ յոյսերը խսրակելու; Սակայն ինքս ինձ մի քիչ իրավուսեցի, բայց և այնպէս—գէմքիս պատեց ախըռութիւնը, գըսշմուեց ճակատիս յուսահատութիւնը:

Նու մի քանի բռտէ լուս սկսեց շնչել սեն՝ ակի մէջ երեկ մտածելով իմ անորոշապատպայի մասին. յիտոյ գարձաւ դէպի ինձ, և ասաց.

— Գիտես, Գյուգոր, եթէ զու երեք շաբաթ սպասես, զուցէ կարողանամ քեզ համար տեղ ճարել այստեղ նոր բացուող մի խանութում իրեկ հաշուապահ:

Թէպէտ դժուար էր ինձ համար երեք շաբաթ սպասել, պատճառ, որ ապրելու միջոց չունէի, բայց և այնպէս խիստ ուրախացայ:

Սակայն այդ ուրախութիւնը տեսեց միայն մի քանի քրոպէ: Նա ասաց՝ «գուցէ կարողանամ...» ևսկ եթէ չը կարողանար... Սարսափելի է մտածելը: Իսկ եթէ չը կարողանար, ես պէտք է մնայի այս օտարութեան մէջ պարապ, սոված, անսառն, անտէր... Որքան թունալից խօսքեր, որքան յուսահատեցնող, որքան աւերիշ... Օ՛, սարսափնիլի է: Հարիւր անգամ սարսափելի է պահպուխար համար օտար և բոլորովին քեզ անծանօթ քաղաքում անգործ թափանել, քան մեռնել: Այդ ես զգում էի: Այդ տեսակ անգարծների համար մահը բիւր անգամ իւր սասն ճանկերով քաղցր է: Ինձ համար էլ, քաղցր կը լինէր, եթէ ես էլ այդ սարսափելի օրին հասնէի. այո՞ք քաղցր կը լինէր... Գալ, օտարութեան մէջ մի քանի շաբաթ, նոյնիսկ ամիոն, պարապ թափանել, և վերջին կոպեկի մնացորդը ուտեմ, այն կոպէկի, որ պանդուխտու

ծերունի և դժբաղդ հայրաբ հաղաբ «միւննաթով», ամաչելով, ծախնելով իւր երեսի «սրուսը» ճարել և տաւել է որդուն, որ յետոյ փախարմնը պիաի վայելէ տասնապատիկ աւելի: Եւ յանկարծ այդ բոլորի փոխարէն, տեսնէ բրւ խարխուլ տան չէմբում որդու տկլոր մարմինը, գեղնած, խօրն ընկած աշբերաբ գէմքը: Դա ծերունու համար կը լինէր մի հարուած, որ հարիւր անգամ վատ է մահից...

Այս բոլորը մի բոպէում պատկերացաւ իւր սարսափելի տեսարաններով իմ աչքերի առջև: Հոգիս սկսեց սարսափելի կերպավ ճշշուել:

Խստակը նկատեց իմ հոգիկան խիստ տանջանքը, և աշխատեց հանգստացնել:

— Ինչու այգպէս շուտ յուսահատուեցիր, ասաց նա. մըթէ մայրդ այդքան էլ կամքի թուլութիւն կունենայ, որպիսին դու ունես: Ոչ, սիրելիս, այդ լաւ չէ, մանաւանդ այս օտարութեան մէջ: Դու չը գիմացար ամենու հասարակ խօսքերիս գէմ անդամ. իսկ ինչ են անուան հազար անգամ քիչնից վատթարները: 2^o է որ կան այս բոպէիս այնպիսիները, որոնք հազար անգամ երանի կըտան քեզ: Մարդու իւր կեանքի մէջ շատ և շատ անգամ է անյաջողութիւնների պատահում. սակայն քաջ մարդը երբէք չէ վհատում, նա իւր կամքի ոյժի շնորհիւ յաղթահարում է իւր առաջ եկող բոլոր խոչնդսաներին: Մինչդեռ դու շպատահած ոչ մի բարդ խօշնդութ, զիս չը մտած կնանքի ասպարեզը, իսկոյն յուսահատուն ես:

Եւ իրօք այգպէս էր: Ես քիչ հանգստացայ, բայց և այնպէս չը կարողացայ հաշտուել մարքիս հետ: Աթի ինչպէս չը յուսահատուել, ինչպէս շանհանգատանալ, եղբ քո ապագան գտնուում է անորոշութեան մէջ, երբ նա կախուած է բարեպատեհ հանգամանքներից, եղբ չը գի-

տես՝ կը մտնես արդեօք, կ'ընդունեն արենց քեզ այդ խանութում, թէ ոչ:

— Ես կ'աշխատեմ, շարունակեց նա. — որ դու անպատճառ մտնեու ես ոչ մի միջոց չեմ խնայի՛, Գիտեմ, որ դու այսուղ օտար ես, անդործ ու անտեր ես, որ քնի հարկաւոր է աշխատել, ապել և օգնել խնդիք ծնողներից: Ես այդ բոլորը զգում եմ, որովհետեւ ինձ էլ պատահել են օպյնանման դէպքեր, ես էլ քեզ պէս յուստհառուել եմ ես էլ խմել եմ օտարութեան զառն բաժակը, հետեապէս ես պարտաւոր եմ, ի ընկերական սուրբ պարտականութիւնն է օգնել քեզ: Միւս կողմից էլ ես տեսնում եմ որ զու տենչանք ես զում բանելու, և ես կ'աշխատեմ:

Ես զգացուեցի:

Այս, սիրելի խանակ, առացի ես, լի անկեղծութեամբ - որքան ուրախ եմ, որ դու մնացել ես նախկին խանակը, նախկին բարի և առնիւ ընկերու, Որքան ուրախ եմ, որ դու գես ես շես մոռացել քա անբախտ ընկերոջը: Որքան ուրախ եմ, որ օտարութեանս մէջ գտնում է մի անձն, որը իմ աղնիւ ընկերն է, և որի աղօրի ու բարի զգացմանքը թեյադրում է նրան՝ օգնել ինձ, միսիթարել, կարեկցել, աշխատել նուսասփիս համար, խղճակ ինձ ու իմ խնդ ծնողներիու: Լսիր ինձ, սիրելի ընկեր, Գու այժմ էլ իմ սիրելի ընկերն ես, դու այժմս էլ նոյն բարի սիրաբ, հոգին ու զգացմանքին ունեօ: Ուրեմն ես վստահ եմ, որ թողի կը տաս բացարձակապէս սիրատ բանալու քո մօտ, խնդրելու, աղաշելու քեզ, որ դու նորին խղճակ իմ ծնողներիու, սրոնց յօյսը միմիայն ինձ զրայ է. թէպէս ունեմ նզբայըներ, սակայն քեզ էլ յայտնի է, որ նրանք հիւանդ են անբուժելի հիւանդութեամբ, որ անդութ նախախնամութիւնը զբաշմել է հիւանդութեան սոսկալի կնիքը նրանց ծաղիկ ճակատին,

Արդ լսիր ինձ, յանուե մեր ընկերական սերտ կապերի: աշխատից գժարագուս համար, Ասածոյ աւըրբ պատուիրաններից մէկն էլ այս է, որ սիրեր ընկերիկ այնպէս, որպէս սիբում ես քո անձգ, հետևապէս քո սուրբ պարտականութիւնն է՝ օգնել ընկերին, կարիք և կարօտութիւն զգացող ընկերին: Ուրեմն նախ խնդրում եմ, որ օգնես, իսկ յատոյ թողնում եմ իմ բախտը քո կամացը. արա այնպէս, ինչպէս կամենաս:

— Ես քո խօսքերը բոլորովին անտեղի եմ համարում, քանի որ ինքս էլ ասացի՝ որ զգում եմ. հետեապէս և բոլորովին աւելորդ են, որ դու նորից կրկնում ես. ասացի, որ իմ կողմից ոչ մի ջանք չեմ խնայի, ոյժէքից վեր կ'աշխատեմ քեզ համար:

— Ուրեմն ես վստահ եմ քեզանով.

— Եղիր վստահ, ասաց նա բարեսրաւութեամբ:

— Յ'անութիւն:

— Յ'անութիւն:

Եւ գուրս զնացի նրա մօտից բաւակտն ուրախ արամարտութեան տակ, յուսալով, որ երեք շաբաթից յետոյ կանգնած կը լինեմ գործիս վւայ:

Վերջացել էր ձեռքիս փողը. մօտս ոչ մի կոպէկ չունէի: Դրւթիւնս խիստ աննախանձելի էր: 2էի համարձակւում իմ բարի տանտիբոջից-Մալաիբոսիցը փող սւզել: Դա արդէն իմ կողմից կը լինէր վերին աստիճանի աներեսաւթիւն: 2է որ նա ինձ աեղ էր տալիս իւր սենեակւում, առաւօտ, երեկոյ թէյ էր տալիս, և այդ բոլորը առանց մի կոպէկ վարձատըրութեան: Մի ամծանօթ, հե-

ոռ նրկացու հետ սյդպէս մի օրում ծանօթանաս, և նա այլքան բարերարութիւն տնէ, իսկ վերջումը կանգնես փող ուղեա. դա նոյն իմկ կը լինէր անխողութիւն:

Սակայն ստամքսս պահանջում էր, պահանջում էր խոռոշեամբ, առանց փոքր անզամ խղճալու դառն վըշտիս: Ես միշտ և ամեն տեղ լինում է խստագահանչ:

Եթ ընկեր Խոահակն էլ ամբան ոսնիկ շէրստանում, որ ինձ էլ տար:

Ես մտածեցի գնոլ նրա մօտ, և Տարցնել նոր բացութիք խանութի մասին. որ նրա առելով պէտք է ապ-գէն պատրաստ լինէր:

Սակայն որքան եղաւ իմ սարքափր, Երբ նա ասաց, որ պէտք է էի երկու շաբաթ սպասեմ: Այժմս արդէն տիրեց ինձ մի ճնշող յուսահատութիւն: Սկսեցի ևս հոգեպէս տանջուել: Ետիւախնածութնոն սարսափելի անօրէ-նութիւն...

Կամոց կամաց ինձ տիրեց յուղիշ մաքերը: Դրսւթիւնս անտանելի էր. պէտք էր երկու շաբաթ էլ սպասել, և միթէ դա երկնային պատուհասից էլ անտանելի չէր: Ինչոք կերակրուել: Ի՞նչպէս բաւականութիւն տալ երկու շաբթում ստամքսի պահանջներին... Եւ դա թուաց ինձ մի անլուծելի հանելուկ...

Դուրս գնացի նրա մօտից զլխակոր, և քայլերս ուղղեցի ինքս էլ շիմանալով, թէ ուր:

V

Ճանապարհին խառն մտքերը ինձ աիրեցին: Զգացի, որ տյդ երկու շաբաթը իմ առողջութեանս վրայ խիստ թանկ պիտի նոտէք: Հեշտ չէր հոգեպէս տանջուել մի օտար, բարեկամներից, ծնողներից տնջատուած տեղ. մանաւանդ, որ առողջութիւնս վրաս չէր, հետեւապէս և

խմատ դժուար էր լինելու ինձ համար:

Մտածեցի մխիթարել ինքո ինձ. սակայն ինչով. իհքս էլ չը դիմէլ:

Տվյալթեամբ նայեցի չոսս կողմա, կարծես աշքե-րով գտնելու մի մխիթարական բան:

Բայց չը կար այդ սանը, չը կար... Կային միայն հարուստ, պճուած տիկիններ և պարսներ, որոնք ի ըանց սկիտական կառքերում նուած, սրաբշաւ անց ու գարձ էին անում լայն և երկար փողոցի, զրօնում-ու-րախանում էին իրանց ննիկայ կեանքով, ուրախանում-հրաւում էին, որ լոգում են սովու ծովի մէջ: Նախանձը շար նախանձը, թունալից նախանձը միայն զարգանում էր արագութեամբ իմ մէջ, ամեն անզայ զրանց նայելով: Բայց այսօր խիստ նախանձին փոխարինեց խիստ ատելութիւնը, զգուանքը: Ես զգարանքով նայեցի այս անզամ այդ պճուած ամէինների վրայ. զգացի, որ դրանք իմ ամենամիերիմ թշնամիններն են: Այս, որքան էի այժմս ցանկանում զրանց վերջանալը, վերջանալը ընդմիշտ. վեցջանար այսպէս, որ եթէ աշխարհու լի լինէր զան-ցով, զտարկուէր, ամայանալ, աւերակ դառնար, շար բուերը զային զրանց գերեզմանների վրայ սուր անէին, որբային... Օ՛, եթէ Աստուած մի ըրպէ իր իրաւունքը, ինձ, տար ես այդպէս կ'տնէի, անշուշտ այդպէս, որ չը գուրս գային իրանց շքեղազարդ ապարանքներից, և շը շըէին այդպէս կոտրատուելով, արհամար-հական հայացքներ ձգնուի իրանց նմանակից աղքատների վրայ:

VI

Այդպէս ես տխուր մտքերի ազգեցութեան տակ զը-նում էի, երբ յանկարծ դէմս ելաւ հօրս նորիկին ծանօթ-

Տիգրան Տիգրանեանը: Նա ի հարկէ ինձ չէր կարող ճանաչել, այսպէս որ ես մօտեցայ նրան, և յայտնեցի իմ լինելը: Նա շափազանց ուրախոցաւ, և սկսեց հարց ու փորձ անել հօրս մասին: Ես կարճ կերպով պատմեցի նրան հօրս մասին նկարագրեցի նրա անտանելի վիճակը և յայտնեցի իս գալուս պատճառը:

Նա թերցու բանեց, և մենք միասին քայլեցինք դէպի նրա տունը:

—Ասում ես այդպէս: Ուրեմն դու պէտք է էլի երկու շաբաթ սպասնա:

—Այս պատասխանեցի ես:

—Թայց չէ որ գա քեզ համար անկարելի է, քանի որ ապրելու միջոց չունես.

—Ե՞նչ արած, պ. Տիգրան, պէտք է հնազանդուել ճակատագրին. այլ կերպ ոչինչ չէ կարելի է անել:

Տիգրեց լուսիթիւն: Մենք առաջ էինք քայլում կամաց: Տիգրանը մտախոհ կերպով աշքերը ցած էր թողի, երկի իմ մասին էր մտածում:

—Ե՞նչ ով կարող եմ քեզ օգնել, ասաց նա, յանկարծ գլուխը բարձրացնելով:

—Ե՞նչ ով... ինչո՞վ... հա, կարմղ էր արդեօք խանութիւ տիրոջ հետ խօսել ձեր կողմից, խնդրել իմ մասին: Դա ձեր կողմից կը լինէր ամենամեծ բարերարութիւնը իմ վերաբերմամբ:

—Ես անպատճառ կը տեսնեմ նորան:

Արդէն հասել էինք Տիգրանեանի տունը: Նա ներս տարաւ ինձ իւր սենեակը, ծոնոթացրեց իւր կնոջ հետ յայտնելով իմ ով լինելը. և մենք նստեցինք ճաշի: Խոստուվանած, ես ինչ այս քաղաքն էի եկեղեցու այլպիսի համեղ կերակուր չէի կերած: Ուզիղ որ մի տեսակ զուարթացաւ:

Ներանք իմ վերաբերմամբ այնքան բարի դանուեցան

ու յապկապէս ինձ համար, առանց ինձ իմացնելու գինի բերել տուեցին. (Իբանմիշն լամում,) սակայն ես հրաժարուեցի զինուց, առարկելով թէ կուխս ցաւեցնում է: Տիգրանեանը մի միջին հասակով, բաւական դիւբալի գէմքով մարդ էր: ինքը կը լինէր մօտաւորապէս 30-35 տարեկան երիտասարդ: Գէմքը խիստ բարի տեսք ունէր, այդ բանով մանաւանդ հատաշտում էին նրա խելացի և մեծ մեծ աշքերը, որ միշտ կարծես ժպավլիս լինէր: Սիրում էր կատակ անել խօսելու ժամանակ, սակայն կարսիքի և վշաբի ժամանակ նա միշտ մտածող էր: Խօսում էր ամենքը հետ շատ որակ և զուարթ:

Այդ իսկ պատճառով ես փոքր ինչ համարձակութիւն ստացայ նրա յետ աւելի պարզ խօսելու, աւելի բարեկամաբար վարուելու: Նա ամեն մի խօսքին պատասխանում էր խիստ մտերմարաք, որը գոնէ հոգեպէս միխթարանք էր լինում ինձ համար:

Մանաւանդ իմ մէջ փայլեց յուսոյ մի փոքրիկ նշայլ: Ես կտրող էի աւելի քան վստահ լինել այդ պարզ մարդու վրայ: Դա պատրաստակամութիւն յայտնեց օդինել ինձ, և թւսւմ էր, որ նա անշուշտ կ'օգնէր: Դիխաւըսպէս մի բան, որ ինձ շատ հանգստացրեց: Այդ այն էր, որ նա քաղաքում բաւական հեղինակութիւն էր վայելում: Ինքը ծառայում էր քաղաքային մի մեծ հիմնարկութեան մէջ, իբրև զլաւառը հաշուապահներից մէկը: Այդպիսով նա ծանօթացել և վարկ էր ձեռք բերել շատերից: Նա նսյն իսկ աշխատակցում էր մի հայ ամսագրի, ոտանաւորներ էր տալիս:

Ես փոքր ինչ ուրախ արամագրութեան տակ, դսւրս եկայ գրանց մօտից, յօւսալով, որ մօտիկ ծանօթներիս միջոցով երկնի կը յաջողուի մի զործի մանել:

Դուրս գալուս Տիգրանեանը պատուիրեց ինձ, որ

յաճախ այցելեմ կը բանգ, յատկապիս տաք կիրակօքը ու-
տելու համար:

Թբանք էլ զգում էին իմ անհիլ վիճակն. դրանք էլ
գուշակում էին, որ ևս անկարսղ եմ ռւժերիցս մեր է,
նիւթական միջոցները չունեմ տաք կերակրութ ռւտիւն,
որ բարական կր նպաստէր համարեա քայլօպտած առողջ
ջութիւնս մերականգնելուն...»

Անցաւ վերջապէս և այդ տանիջանքներով լի կրկու շաբաթիք: Եկաւ վերջապէս և նշանակեալ ժամը:

Պէտք է երկարացնել, թէ մինչեւ այդ երկու շաբաթը ես ինչ սոսկալի տանջանքներով կնքս ինձ քաղց տուեցի:

Առաջքեամբ վազ գնացի ընկերօջ Գեղագեանի մօտ
տեղեկանալու դութիւն մասին։ Նա նոտած թէյ էք խմում,
եթի ևս ներս մտայ։

Կարծես իմ անալինկալ յայտնութիւն նըսան շփաթեց, բեց; Ես այդ նկատեցի և լիսա վատ քան գուշակեցի:

— նստիր խնդրեմ, և թէյ խմբը. առաջարկեց նա: — զնորհակալ եմ, խմել եմ: Ես եկայ տեղեկանա-

լու կործիս մասին. արդեն անցաւ եթիւ շաբաթը:
—Բայց... ախ, ես... ես... կմկմացը եց նա: Խեղճ
ընկեր, երեք չկը կամենում յանկաւծ հարուածել:

ի՞նչ, ասա, չէ՞ որ ևս սպանկից ընկերն եմ, աւսացի ևս պարզապէս:

— Աս, սիրելի ընկեր, թէպէտ գժուար կը տանիս
խիստ ճարռածն, բայց և այնպէս ստիպուած եմ տա-
լու: Դու պէտք է ճարտհատել էլի երկու շաբաթ սպա-
սես, այլ կերպ ճնար չկայ:

ի՞նչ կը լինէք ինձ համար աւելի սօսկալի, աւելի
մնշիչ, աւելի սարցսեցնող քան այդ մեղմ ընկերական սըր-

տից բղիքած, բայց թուռալից խօքելը։ Այս անտանեկի
էր ինձ համար։

Այս անգամ վերջնականապէս ես ընկայ խորը ինք-
նամուացութեան մէջ։ Ինձ տիրեցին սոսկալի մորկը;
Ես համարեա անզգայ դրութեան մէջ ընկայ։ Ի՞նչ անել-
մուր գնալ, ումը դիմել այս օտար, անծանօթ քաղաքում։
Ի՞նչ զեզ ու ճար գտնել մաշուսդ սրտիս համար։
Ըներական անկիղծ միսիթ քրական խօսքերը ալիս անդօր-
էլին մաշուսդ սրտիս սպիտակնի լինելու...»

Բայց ուժը գուսը բաղկանէլ։ Արդիօք մուրալ, արդիօք
ողջօրմանթին շը խնդրել... Օ՛, սարսափելի է... մուրալ,
մուրալ և այնպէս ուտել։ Սակայն միթէ իմ անձնական
եռը, այն եռը, որին ես մի առանձին ակնածութեամբ եմ
վերաբերուել—թոյլ կը տայ այդ սառը և զաղբելի միջա-
ցին զիմնեւու, հ՞եւ, մուրալ և սկ—ժանդոտած զառչների
հետ ստանալ թուք ու մուր... և այդ թուք ու մուրը
ուտելի ինչպէս համեզ պատառներ... Սոսկալի է... Մահը,
մահը բիւր անգամ լաւ է մուրալուց, ձեռք մ'կնելուց,
այդ սառը և զաղբելի աշճնասոթից։

Բայց ինչ անել, . .
Սակայն կայ մի միջոց, մի միջոց, որ ընդմիշտ կազմատէ ինձ այս աշխարհային գառն վշտերից, սոսկայի և յօւղուղ մտքերից, ամեն տեսակ հոգութից, տառապանքներից շարչաբանիներից: Դա մահն է, այժմս ինձ համար քաղցր մահը: Ինչո՞ւ ապրել այսուհետ, էլի տառապանքներ, հոգսեր, մտքեր, գառն շարչաբանիներ կրելու Ծ, ընկեր միանգամից ջուրը, և ամեն բանի վարջ տալ, աղտառելու:::

Ծագութեաբս... Ենչ կը լինի նըանց ևթէ իմանան ի՞մ
մահանալը... Զէ սրես ապրում միմիայն մի նպատակի

համար. ուրախացնելու ծնողներիս, և յանկարծ գրա փոխաբէն լսեն իմ մահը...

Ոչ ոչ, ես պէտք է դեռ ապօհմ, օգնեմ ծերունի հօրս, և ոչ թէ նրան սուզով գերեզման իջնցնեմ:

Ուրեմն ինչ անել ինչ միջոցի դիմուլ: Գնալ, վիրադառնալ արդեօք հայրենիք, կը լ տեղացիների թուքն ու մուրը. անմոռնչ ուտել նրանց հասցրած վիրաւորանքները, ամօթանքները, զաղելի և կեղտոտ բամբասանքները:

Պարտաւոր եմ ուտելու: Տղիտութիւնը ոչինչ չէ հասկանում: Նա միայն ասում է անդործ է, հատևապէս և փշացած է: Նա չէ կարողանում հասկանալ, որ անգործութիւնը կապ չունի վիշացածութեան հետ, որ դրանք բոլորովին տարբեր և միմիանց հակասող բառեր են: Նա չէ հասկանում և երեխ չի էլ կամենայ հասկանալ, որ անգործը կարող է և ազնիւ լինել: Եւ այդպէս տղիտութեան խուժանի հասցրած այդ վիրաւորանքները տղիտութիւնը պահանջում է լսել:

Սակայն այդ բոլորը չէ: Ի՞նչ ասել ծերունի հօրս, այն մարդուն, որ ժամ առ ժամ սպասում է իմուրախալի նամակիս, յոյս ունի վայելել աշխատածս և ուրախանալ, պարծենալ ինելօք որդու աշխատածի վրայ: Ի՞նչ կը լինի նրա զրութիւնը, երբ տեսնէ, այս բոլորը մի փուշ ապակու պէս փշրուած: Միթէ չի կարծի, որ ես ծուլութիւն եմ արել, որ ես անհոգ եմ վերաբերուել գեղի իմ անգործութիւնը, որ ես միայն նպատակ ունէի քաղաքում թափառել և հրճուել նրա գեղեցիկ տեսարաններով, և ուրիշ ոչինչ...

Բայց ոչ, նա այդ մաածել չէ կարող: Նա ինձ ճանաշում է. նա կարող է իսկոյն բոլորը հասկանալ: Միայն և ցաւ կը լինի նրա համար, միայն իւր բախտը կանիծի նա, որ մենք հօրից բռնած միշե փաքք որդին անբախտ ենք:

ապէ յմարումք յմասպախոց ոցազար քպարք զդմարք VIII.

Միւս օրը ևս զավթնեցի բոլորսկին թմբած: Գլուխս ծանրացել, կարծես տասը պուդի չափ էր զարձել: Հալաւս քրտինքից թրջուել էր. ինչպէս երկում էր քնած ժամանակս շատ էր չարշարուել վատ երազներից: Դանգաղութեամբ վեր բարձրացաւ և սկսեցի հագնուել:

Նորից սկսում էին անտանելի մտքերը ինձ սիրել: Նորից ևս սկսում էի սանչուել այս անլուծելի հարցով, թէ արդեօք ինչնվ պիտի բաւականութիւն տամ ստամոքսիս խիստ պահանջներին: Սկսեցի մտածել, Այժմս ինձ մնացել էր մտածել, մտածել և մտածել: Մտածել նիւթականի մտածն, մտածել անորոշ ապագայիս մասին, մտածել նամակիս անհամբեր սպասող թշուառ ծնողներիս մասին:

Եանկարծ զլիսումս մի միտք ծագեց:

Ես ունէի մի ժամացոյց, վերարկու, մի ջոխա համարեա նոր կօշիկներ և մի քանի աւելորդ մանը իրեղէններ: Մտածեցի, ինչիս են պէտք այդ առարկաները, քանի որ հեծծում եմ խիստ կարեքի մէջ, քանի որ չեմ կարողանում ստամոքսիս պահանջներին բաւարարութիւն տայ: Ինձ թուաց, թէ՝ այդ բոլոր առարկաները ինձ բոլորովին աւելորդ էին, առանց որոնց էլ ես հօլա կերթայի:

Եւ ես մտածեցի այդ բոլորը ծախել: Թէկ գժուարէ էր, բայց պէտք է հանգամանքների հետ հաշտուել, հետզանդուել ճակատագրի գառն կատակների հետ: Ներկաս այդ էր պահանջում:

Պճառւած էր: Ես պիտի ծախէի այդ իրեղէնները: Բայց մի գժուարութիւն, մի խիստ խոչընդուն էլ հանգէո եկաւ: Ի՞նչպէս ծախել... շալակել և ընկնել փո-

զոցները, բղաւել, ապրանքը գովաբանիլ, գնողներ հրաւիրել...

Դրա վրայ էլ շատ մտածեցի, գլուխս ճաքեցրի,
բայց վերջը զրա ճարն էլ դատայ:

IX.

Օրը կիրակի էր:

Ինքս ինձ մտիթարեցի, քաջալերեցի և վերցը իրենիներս, ու տարայ այս քաղաքի «եարմուկէն»: Է՞հ, ի՞նչ արած, թէպէտ մի քիչ ամօթ էր, բայց ով էր ինձ ճանաշողը տյդ ահագին քաղմութեան մէջ որից ես ամաչէի:

Ամբողջ օրը ես շրջեցի աշգտեղ և հաղիւ հաղ մինչև
մոթե ընկնելը կարսղացայ ծախել բոլորը:

Բայց ինչպէս ծախեցի զիտէք. բոլորը քառորդ գնի
և էլ պակաս, այն էլ հազար «միւնեաթով»: Միմիայն մի
քանի բուրյիներ բներեցն իմ իրազէններս, որոնք հաղիւ
բաւականանային ինձ մի հինգ վեց օր:

Անցաւ մի քանի օր:

Այսուհետեւ ինքս մտածեցի զնալ-բաղինել մի բանիս-
ների զուռը, զործ խնդրել, զուցէ. ով զիտէ բախտը
յանկարծ ժպտաց ինձ:

Սակայն ով է տուել մեղաւորին արքայութիւն: Թը-
շուառութիւնը և անբախտութիւնը անջնջելի կերպով կըն-
քուել էր ճակատիս:

Ամեն տեղ միենոյն բացասական պատասխանն էին
տալիս՝ «չը կայ»: Չատ տեղ նոյնիսկ կոպտութեամբ բար-
կանում էին վրաս, որ ես համարձակում եմ նրանց «հան-
գոտութիւնը» խանգարելու: Չը կար ինձ համար զործ
ըլ կար, կարծես նախախնամութիւնը ընդմիշտ զոցել էր
բախտիս գոները. կարծես նա զիտութեամբ էր հալա-
ծում ինձ...

Այս նախաք առց Անգլիայի ցւած վայածաւուն
չ պահանջանք ունենաւ է: Խ. այս որդ խմբուն է նույնը
նախաք չ մասնաւ ունենաւ պահանջանք ունենաւ
զերջացաւ և փաղերս: Նորից ինձ համոր հանդէս
նկատ սովոր, սոսկալի սովոր: Նորից ստամոքսն պահեց անո-
զոքարար ուտելիք պահանջնել: Նորից ես սկսեցի օրերով
սոված մնալ. Նորից նոյն սոսկալի յուսանատիթ ինը
տիրեց ինձ:

Այժմս ինչ անել...

Երկար, շատ երկար մտածեցի: Եւ մտածմունքնե-
րիս հետեանին եղաւ այս, որ ես գնաս ուզգակի տյդ ժա-
մանակուայ իւր բարեզգործութիւններով հաշակուած Քեն-
դիրեանից զործ խնդրեմ, այնպէս, որ նա ունենալով մեծ
զործաբաններ և հիմնարկութիւններ, կարսդ էր ինձ տեղ
տալ իւր մի որեկէ է գրասենեակում: Այսու

Այդ էր մնացել ինձ, գնելակ հաջուատից, այն հա-
րուսակ, որին ես տակորվ ատում էի—զործ խնդրել:

Ես մի ըռուէ մտածեցի յնտ կանգնել այդ մարից,
պատճառ, որ լսել էի, թէ՝ այդ «յայտնի բարեգործները»
հեշտութեամբ զործ չեն տալիս, շատ դէպքերում նոյն
խոկ կոպտութեամբ զորս էին վանդում, այլապէս ասած
չեն սիրում անյայտ բարեգործութիւն անել: Այս, պէտք
է այդ բանը նրանց կտրծիքով բարեգործութիւն համա-
րել: Առաջատից մինչև երեկոյ աշխատել նրանց համար և
փոխարէնը ոտանալ չնշին վարձապատճեն, ու այդ էլ
ընդունել իրը բարեգործութիւն: Այդ «բարեգործու-
թիւնն» էլ ասում են միայն այս դէպքում, երբ հաւասար
են, որ այդ բանը յայտնի կը լինի շատ տեղ, որի համար
կը փարանեն նրան, բարեգործ կանուանեն...

Եւ մտածեցի յետ կանդնել, բայց նորից առաջ ե-
կաւ ստամոքսիս խնդրը: Երկար մտածեցի, և զերջը մը-
նաց վերը յիշած որոշումը:

Յուսահատութեանը գէպօքերում շատ անդամ մարդ դիմում է նոյնիսկ իւր սխերիմ թշնամուն. նա յանձն է առնում ամին տեսակ ստորութիւններ, յանձն է առնում ծախել իւր ազնիւ անունը: Ուրեմն ինչո՞ւ չը պիտի դիմէի ես նրանքանի որ ոչ ստորութիւնն էի գողօւմ և ոչ անսունս էիծափսում, այլ միայն գործ էի ինդրելու: Վճռուած էր:

XI.

Երեկոյ էր, մի պարզ երեկոյ: Անթիւ աստղերը հեռաւոր ջահների պէս փայլում էին կապուտակ երկնակա մարի վրայ: Զեփիւաը մեղմութեամբ փշում էր հիւսիսից: Լուսինը իւր արծաթափայն լոյսը սարի յետեկց մեղմ և սէլունատես հարսի պէս գցել էր քաղաքի բարձր բարձր գերի վրայ, և կարծեն իւր վերջին մնաս բարեն է մաղթում նրան:

Եղանակը հիանալի էր: Խառն յասոյ և մաս կար սկայ անշուք ընակպանից, և համբ քայլերակ դիմեցի քաղաքի այն մասը, որանդ ընակը ուժմ էր հարուստ միլիոնատէը Քենդիրեանը:

Առատ լապտերների լուսաւորութեան ներքոյ, լայն փաղոցներով անց ու գարձ էին անում երկու սեռի անթիւ և անհամար մարդիկ: Ճեզրում էի ձանձրութեամբ այդ քաղմութիւնը, և անցնում, լուս ու մտասբադ կերպով:

Ինձ լսելի չէր նրանց ուրախաձայն քրքիչները, բարձր ծիծաղները, խօսակցութիւնները: Զէին հետաքրքրում ինձ նրանց վերջին մուկայի ճռխ հագուստները, զեղեցիկ վետարազարդ շետապանները: Զէին հետաքրքրում նաև գեղեցիկ օրիորդները որոնք իրանց սիրող և պաշտող կոշտողների հետ թեանցուկ անցնում էին, երեկ իրանց մէջ մտածելով, թէ ինչպէս անենք, որ մեր կեանքը

լինի լուսանտիկ, այնպէս, որ զարմացնենք մեր ուրիշ ընկերներին, արժանանք նրանց լուրջ սւշազըութեանը, կամ ուտելին հետաքրքրութեանը: Այս ու միայն երկմտութեան մէջ էի, գնամ, թէ ոչ: Եւ զնացի...

Հասայ փերջապէս և Քենդիրեանի պալատանման ապարանքը: Ուսպիսի գեղեցկութիւն. որպիսի առատ լուս սաւորութիւն, և բայորը ելեքտրականութեամբ:

Ես մի բատէ ինքնամոռացութեան մէջ ընկայ: Քայց շուտով սթափուեցի և առոնց երկար ու բարակ մատծելու համարձակութեամբ մօտեցայ և... զանգահարեցի... Սիրտս սաստիկ ուժգնութեամբ տրոփաց:

Գուռը բացուց: Առաջ կանգնեց հաստափորի մէկը, բայց խիստ գեղեցիկ հաղնուած: Նրա պապգան կրտ ձակննը տեսնելով, կարծեցի թէ նա անտիճանաւոր է: Նա գրանց «շվեցարհ» է՛ղ, ու առորդու բարութիւնը մինչ էք կամենում: հարցըց նա, ոչ այնքան խիստ կերպով:

Պ. Քենդիրեանին եմ կամենութեան և ու մի Սյդ ժամանակ փառաւոր գոնից դուրս եկաւ մի ուրիշ ծառայի առաջնորդութեամբ մի բաւական բարձրահոսակ և թանկագին մօւշտակում փաթտթուած մէկը, և սկսեց ցած իջնել մարմարեայ սանդուղքներով: միենայն ժամանակ հարցական կերպով նայելով գրաս: Խնձ հետ խօսող շվեցարը աշխադ արեց ինձ, կամենալով հասկացնել, որ գա է Քենդիրեանը: նայելով նրա զէմքին, ես ակամայ ցնցուեցի: մի ներքին զգացմունք ինձ տասց՝ «գուրս գնայ, ոչինչ չի գառնայ...» բայց այդ ժամանակ լիշեցի դրութիւնս ու մօտեցայ նըրանց, խօրը գլուխ տուեցի, և ասացի:

Պայծ առափայլ տէր... ես, ես... արգեն երկու ամբու է ինչ եկել եմ... բայց գործ չեմ...

— Իէ կորէք անպիտան արարածներ. զոռաց նախնձ վրայ, և դարձաւ չվեցարին. «քեզ հագար անդամ տու եմ, որ սրա պէս «ժուլիկներին» այստեղ իմ թող:»

Սկզբում ես սարսափեցի, և թուաց ինձ, որ ամբողջ աշխարհն փլուեցաւ զլիխս, բայց մերջին խօսքերը, «ժուլիկ» բառը իմ ինքնաօիքութիւնս գողսեց. և ես մոռացած որ, մի միջինատէրի տանն եմ կանգնած, զոռացի նրա վրայ և մի վիրաւորական խօսք նետեւած, զորս փախայ առանց յետ նայելու:

XII.

Դուրս փախչելով այդանդից, ես քայլերս ուղղեցի դէպի տուն: Համեմելով տուն, ես անմիջապէս մտայ տեղս և աշխատեցի քնել. քնել միայն նրա համար, որ ազատուէի յուղուող, ալեկոծուող մտքերից.

Սակայն քունս խոյս էր աալիս ինձնից: ես չէի կարսանում քնել: ես լցուած էի, գառնութեամբ, ինձ թւում էր, թէ ես մի մեռած անձն եմ, և զարմանում էի: թէ ինչպէս է, որ դեռ շնչում եմ: Զարմանում էի համբերութեանս վրայ, որ մի անդամ վերջ չէի տալիս զգուելի կեանքիս:

Ինչո՞ւ հարուստները այդպէս անզութ են իրանց նմանակիցների վերաբերմամբ, որ մինչև անդամ զազանին յատուկ չէ. մտածեցի ակամայ, — ինչո՞ւ նրանք զառնացնում են մեզ պէս այլքատներին. միթէ նա չէր կարող աւելի հանդարաւութեամբ ինձ ճտնապարհ զցել... Այս, կարող էր նա այդ, բայց չուզեց, որովհետեւ չար էր, որովհետեւ նրա ներքինը այդպէս էր թելաղում: Նրա ներքինը թելաղում է զազանի տեղը հարուածել լուանքներ թափել-խելմի զլիխն, իսկ բազմութեան առաջ, բոլովի յայտնութեամբ անօգուտ բարեկործու-

թիւն անկել, այլապէս ասուծ: — ֆարիսեցութիւն անելու ահա նրա իդեալը: Բոլորի յայտնութեամբ բարեզործութիւն անսել, որպէսզի նրա օնուենը անմանանոյր որպէսզի հասարակ, անհասկացող, տպէտ գասակարպի մէջ նրա անունը լիշտի, որպէս մի ասուաւծ ացրած էակի անուն: Այդ հարուստն է, որ աննպատակ է համարում գաղանի տեղը բարեզործութիւն անիլ, որովհեակ զաղանի է, ոչ ոք չի իմանայ, որ նրա անունը գովինեայ սպակներով» զարգարի: Բայց սպան բռնիւներ, հարիւներ, հազարներ մինչև անդամ տամնեակ հազարներ կանաչ սեղանի շուրջը դարմանի պէս կը սփուն, և ինչի համար, զիտէք... Մինիայն անձնական հաճոյք զդալու համար: Հազարներ շպրաել, միայն հաճոյք զդալու համար... իսկ զուրսը թող մերկ ազքատի ձիւնի մէջ նրանց աշքերի առջև սառնամանիցից կծկած զազողացնէ, սառնամերը ուժգնութեամբ իրաբ զարգէ և անհամբերութեամբ սպասէ օրհասական ըստէին, մահուան քաղցր բողէնն:

Նրանց փայթը չէ:

Բայց կայ մի զասակարգ, որ պահպանում է գեռ և նախնական բարի սիրտն ու հոգին: Դա աղքատն է, որ ինձ թւում էր, թէ զրանց զոյսւթեամբ է, որ աշխարհի իւր զոյսւթունը պահպանում է: Ուրմը չև յայտնի, որ աղքատն է աղքատի կարիքը հոգաղը, աղքատն է նրա զարդին զարման անողը, նրա թեկից բանող վեր կացնողը: Եղբաներն են, որ միմիանց հոգի ու կեանք են ներշընչում, միիթարում, հանգստացնում են: Աղքատն է, բոլորն էլ աղքատը: Մարդասիրութիւնը, բարսականութիւնը, աղնութիւնը, ողսըմութիւնը աղքատիցն է բղխում: Եւ ոչ չի զարմանայ, եթէ մէկը ասէ՝ այս ինչ հարուստը այս ինչ բարի գոլծովն է զրադուած. (աշթէ «քարոզում» զոռում, այլ «զրադուած», որովհետեւնը զիտենքա-

րողել, բայց շը կիտեն զործնականը ցոյց տալ.՝ ի համբ կէ բոլորին էլ գա կը լինի մի հըաշք, մի անհաւատալի բան:

Եզրատին մօտ է և նրա սըտակից բարեկամ գիւղացին, այս բնութեան զաւակը, այս պարզ, նահապէտական մարդը, որը թէկ չէ կարսզանում լեզուսվ քարսզել բարյականութիւնը, մարդամիբութիւնը, ասկայն արտայայտում է աշըերով, գործում է անզիաակցաբարձեռ քերովներջնուած լինելով իւր նախորդների սպնիւ գաղափարներով: Ազնիւ է նա, բայց ափսաս, տպէտ է... գիւղացու միակ պակասութիւնը այդ է, բայց նա թէ պարզ է, ազնիւ է դա ակներել է: Ազատ բնաւթիւնը, նահապետական կեանքը նրան զերծ է պահերամեն տեսակ կեղծիքներից: Նա դեռ ևս իւր նախորդների պէս հիւրասէր է նա դեռ ևս թազմ է, նա իւր բերանի «թիթէն» ուրախութեամբ կիսում է «ակնից» զոնալի հետա:

Ասկ քաղաքարժում: Այնաեղ տիրում է կեղծաւթիւնը իւր բոլոր զզուելի տեսակներով: Այնաեղ մռացել են ճմարիտ Սատծուն: Այնաեղ տիրում է փողտագաշաւթիւնը: Այնաեղ տիրում է նոր արծարծուած հնթանուսութիւնը, կուագաշաւթիւնը: Այնաեղ այս Աստուած չը կայ, մարդիկ վաղուց երես են գարձել նրանից, և պաշտում են մի նոր-ուրիշ աստծոյ-փոլին:

Դառն մոքերիս փոխարինեց այդմ մարմնիս մի տեսակ անհակսութիւնը, զուռ եկայ միւս կողքիս վրայ և աշխատեցի քնել, սակայն քննը խոյս էր տալիս ինձնից: Գլուխս ծանրացել էր—ցաւում էր: Մարմնիս անդամնեցը կարծես թէ մուրճով ջարդուած լինէր: Միքանի անդամ աշխատեցի քնել, բայց ոչ մի կերպ չը յաջողուեց: Նորից դառն մարերը սկսում էին տիրել ինձ, նորից ես խորասուզում էի մաքերի մէջ: Բայց եօ աշ-

խատում էի խոյս տալ մտածելուց, այդ զգուելի առարկաների մասին մտտծելուց:

Ես չգաճգորէն պառկած տեղից ձեւքս մեկնեցի և վերցրի սեղանից մի լրտպիք, և սկսեցի ձանձրութեամբ կարդալ, նրա համար, որ մոռացութեան տալի մի կերպով մտածութիւններին:

Բայց շուտով լրտպիքն էլ ընկաւ ձեռքիցս, և քունսկամաց կամաց հկաւ վրաս, ու ես քննցի:

XIII

Միւս օրը ես վաղ զարնթեցի, և առանց երկարբարակ տատանուելու, մտացեցի՝ նորից գնալ պ. Տիգրաննեանի մօտ, նրանից էլ հարցնել գործի մասին: Սակայն շրաբի ցաւօք նա նոյնը յայտննց, ինչ որ երկու շարթ ասաց յայտնել էր ինձ Գեորգիանը, միայն առաջինի առելով պիտի աւելի շատ սպասէի:

Ճար շը կար, ինչ անել:

Ես սկսեցի մի վերջին անգամ պ. Տիգրաննեանին խնդրել, որ նա գուցէ կարողանար ուրիշ գործ ճարել: Բայց սա գլուխը բացասական կերպով շարժեց և խորհուրդ տուեց վերագառնալ գիւղը, պարապուել գիւղատնտեսութեամբ:

Գիտես, Գրիգոր, ասաց նա, լուրջ նայելով վրաս, եթէ ես քո տեղ լինէի, ոչ մի կերպ յանձս չէի առնի գալ քաղաք, մտնել այս թանալից մթնուրութ, սրտեղ շատ և շատ քեզ պէս գիւղացի տղերք ծաղիկ հասակում կլանուել, զոհ են զնացել թէ բարսյապէս, թէ փիղիկապէս և թէ նիւթականապէս:

—Այդ ես գիտեմ, շատ անգամ եմ լսել, ասացի ես մեղապարտի պէս գլուխս ցածացնելով:

—Հետեապէս ինչը քեզ ստիպեց զալ այստեղ, այս

թունալից մթնոլորտը: Միթէ զու չըգիտէիր, որ այստեղ հեշտութեամբ զործ ճարել չի կարելի: Միթէ զու կարծման էիր, որ ծանօթներիդ միջացավ կարսդ ես հեշտութեամբ զործ ճարել: Մինչդեռ կան այստեղ քեզ պէս բախտախնդիրներ, որոնք աւելի մեծ ծանօթների շրջան ունեն քան զու, սակայն պարագանեն: Եթէի զու չը գիտէիր, որ այստեղ կան նայնիսկ սոված համալսարանականներ, որոնց քաղաքում ապրելու վափազը մղիլ է այստեղ և որոնք սակայն այսօր սոված են, որոնք պարաստ են ամենաշնչին ոռնիկով ծոռայելու, բայց տեղ չը կայ, զործ չը կայ: Թրեմն զու ինչնու, ինչ խելքով պիտի թողնէիք գիւղը իւր առողջարար կիմոյով, սասնորակ աղբիւրներով, պարզ օգով, ինքնտեկամ կամքով, որտեղ զու քեզ համար կարսդ ես մի բանով, մի շատ հեշտ նոյն խսկ քեզ բաւականութիւն պատճառող բանսվ զրադաւել և լինել քո աղատ կամքի տէրը, և ոչ այստեղի պէս, որ ամեն բառէ քո մեծ տւորի պատիերը երկիւղ է ազգում վրալ: Մի հասարակ բան, մի թեթև սիալմունք, և առիպուած եօ լինում ենթարկուել նրանց զգուելի և անտանելի նկատելութիւններին: Մինչդեռ զիւղում զու այս բալորից աղատ ես, զու քո կամքի աղատ տէրն ես. ոչ ոք քեզ վրայ իրաւունք չէ բանեցնում, ոչ ոք չէ ասում, թէ աշքիդ վերել յօնք կայ: Անում ես այնպէս, ինչպէս քո սիրոն է ցանկանում: Լուր, շարունակեց նա, զիւղում կան շատ և շատ հկամուտների աղբիւր, աւելի շատ քան այստեղ: Թու բաւական զարգացած ես, այնպէս որ յօյս ունեմ, որ շուտ կ'ըմբռնես տաճներին իմաստը, և կիմանաս խօսքերիս արժէքը այն ժամանակ, երբ զու կը հետեւս բարի խորհուրդներիս, երբ իմ առաջներու գիրականացնես: Այն ժամանակ դաւ միայն կը հասկանաս, որ ես քեզ բարի խորհուրդ եմ տուել և ոչ շար, քու զիւղում կարող ես պարագաների մեջուարութութեամբ,

շերամապահութեամբ, որոնք ոչ միայն գժուար չեն, այլ իմ կարծիքավ նոյնիսկ բաւականութիւն պատճառող բողը բաղմունքներ են, ինչպէս վերը յիշեցի: Դու կարող ես այստեղ այցի անկել քեզ համար. այնուեղ հազր հեշտութեամբ է ձեռք բերուած: և հարկէ այս բարքի համար հարկաւոր են ձեռնարկներ, որոնք խօսք եմ տալիս ինքս հազար: Եւ դրանով ոչ միայն քեզ օգուտ կը լինի, այլ և մի բարի օրինակ կը զառնաս քո համագիւղացիների համար: Դու զեքերի օկնութեամբ կարող ես վարել սնողերը պարագացնել, և դա որքան ահապին օգուտ կը լինի թէ քեզ և թէ զիւղացիների համար: Ժամանակի ընթացքում, երբ զու քեզ համար զիւրք սուղծես, երբ շատ քիւրք սուղծես, երբ շատքիշ վարի ձեռք կը բերես, զու կարող ես ձմեռները առջի պէս նեխուած զսմերում քուն մտնող զիւղացիների համար ստեղծել մի զրադմունք, որը շատ քիւրք նիւթական օգուտ կը տար զիւղացիներին: Եւ զու դասնով զարկ կը տաս ոչ միայն ձեր զիւղի բարելաւութեան, այլ և շատ ուշից շրջակայ զիւրքի բախտաւորութեան պատճառ կը դասնաս: Պակասում է տպէտ զիւղացու համար մի խելօր ձեռք, ուրեմն զարձիր տյդ բարի ձեռքը. աշխատիր քո զիւղացիների համար, և օրինակ եղին շատ քեզ պէտներին: Պորանով զու կազատես շտաբերին քաղաքի թունաւոր և կորսարեր մթնոլորտից: Եթէ ոչ, ինչ կը լինիս զու այստեղ, մինչի կեանքիդ վերջը միհնոյն թմրած մարդը, որ լինում է միշտ թշուառ, աղքատ, վտիտ, հիւանդու և այլն: 25 որ զու այնքան էլ մեծ ուսում չ'ունիս, որ զործումդ միշտ յառաջաղիմն: Բո ծառայութիւնը լինելու է տարիների ընթացքում միշտ միհնոյնը, շը պիտի բարձրանաս, ուրեմն ոսճիկդ լինելու է ամենաշատը ոչ աւելի քան 40—50 լուրի: Միթէ զու զորանով կարող ես այստեղ ապրել, որ ամեն տեսակ մթերքներ թանկանում են—կեանք վարել,

պակուել, որդոցը՝ ուսման տալ: Ոչ, ոչ, դա իմ կարծիքով կը լինի վերին աստիճանի անմռութիւն: Համար շէ որ հայկաւոր է մի զգալի դրամագլուխ: Օրտեղից ճարեմ ես այդ դրամագլուխ:

— իմ կարծիքով քեզ ոչ մի մեծ դրամագլուխ ճարէ կաւոր չէ: Դու ուզում ես բոլոր մի անգամից անել. դա նշանակում է այն սարի գագաթից թաշել ընկնել այստեղ, մինչդեռ դա անհնարին է, պէտք է կամաց կամաց ցած իջնել: Այգակս և զու: Դու պէտք է սկսես կամաց կամաց, աստիճանաբար, և ահա կը տեսնես՝ մի քանի տարում բոլոր իրականացած, 2է որ աշխարհումս ոչ մի հարուստ մեծ դրամագլուխ չէ դրել, որ այժմս հարուստ է: Բոլոր պէտք է սկսել աստիճանաբար: Ի՞նչ հարկաւոր է մեծ դրամագլուխ, դրա համար հարկուոր է միայն քիչ գիմացկանութիւն, լսյա և տոկունութիւն:

— ես համաձայն եմ, և խիստ շնորհակալ ձեր բարի խորհուրդների համար. ասացի ես համոզաւելով նրա ասածներից:

— Ուրեմն զու կը գնաս:

— ես վաղը կը ճանապարհուեմ անպատճառ:

Եւ ես միւս օրը բոլորի հետ հրաժեշտ առւեցի, շնորհակալութիւն յայտնեցի նորից պ. Տիգրանեանին, և ճանապարհուեցի գէպի իմ հայրենի գիւղը, թքելով քաղաքի վրայ, նոր միայն զգալով նրա ոշընչութիւնը:

Եւ այն օրից ես քաղաքի մասին մի առանձին սոսակութեամբ...

Дозволено цензурою. Тифлисъ, 3 февраля 1903 года
Гип. т-ва (Вереничевъ и Каменмакеръ) Мих. пр. № 81.



Ժախտում է Կենդրօնական եւ «Գուտառենթերեզ»
գրալիանառանցներում։ Հեղինակին դիմել հետե-
մալ հասցեով։ Կր. տտ. Դզեգամъ և Կեդաբեկъ,
Մանալյանը.

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊԵԿ

2013

13116

